

# ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ \_\_\_\_-Ա

**ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 301 000 /երեք հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ:
2. Հաստատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
4. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին:
5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 04-ի թիվ 2-Ա որոշումը:
6. Սույն որոշման 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերն ուժի մեջ են մտնում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունները կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ՕՀԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ  
ՊԵՏ՝

Ա.ԱՎԱԳՅԱՆ

ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ  
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ